տպացոյց է, որ մարմնի բոլոր մասերը իրենց միջից միակերպ լաւ անց են կացնում Ռեոնտգենի ճառագայթները. ընդհակառակն էգ բոժոժի նկարի ուրուագծի այն մասում, ուր միջատի փորն է, նկատւում են աչքի ընկնող բազմաթիւ մութ կէտեր, որոնցով իմացւում է, որ այնտեղ կան ձուերը։

Ռեոնտգենի ճառագայթների այս նորագոյն գործադրութիւնը ահագին նշանակութիւն ունի, ոչ միայն վերը յիշուած պատճառով, այլ նաև նրա համար, որ արուի բոժոժները, ըստ որակի, տալիս են անհամեմատ աւելի լաւ մետաքս, քան թէ էգերինը։ Բացի այս՝ երբ միանգամ հնարաւոր է լինում անսխալ կերպով որոշել էգի բոժոժը արուի բոժոժից, դորանով արուի ծանր բոժոժները, որոնք առաջ էգի տեղ ընդունուելով թողնւում էին սերմի համար, այժմ աղատւում են փչանալու վտանգից և այդպիսով ստացած մետաքսի քանակութիւնը ևս աւելանում է։

Թարգ. Ա. Ս.

ԵՐԵՔ ՔԱՐՈԶ

Խաչակապ գիւղում երեք քահանայ կային։

Մեծ պասի մի կիրակի երեքն էլ միմեանց ետևից քարոզ խօսեցին։ Առաջինը սկսեց այսպէս.

—Սիրելի ժողովուրդ, մ'հիկս [1]) գիտում էք ի՞նչ կայ, սուրբ Աւետարանի ղրաղին կիրում ա թա«ղուացարուք, սրբեցարուք» մ'հիկս, սիրելիք, մենք սրանից ի՞նչ պանքհսկանալ.—մ'թամ [2]) թէ մեծ պաս ա եկել. պտի լուանուանք ու սրբուփուենք. սրա հըմար էլ ես ձեզ աշխարօրէն մի լաւ առակ կասեմ, դէ լսեցէ՛ք։—Արջն որ արջնայ, քառասուն օր իր ծակումը կենումայ ու քառասուն օրից ետոյ դուս ա կալիս իր ծակիցը ու քինում մի շըռոթանի [3]) տակ մանում, պիրանը բաց անում, ջուրը պիրանովը նի ա դառնում, ետքովը դուս դառնում։ տէնց անումա թա ինչա մէջ ղՀլը թըմզի և փորումը տանձի կձեպ չի մնայ, որ նորն [4]) ու

---

1. այժմ. 2. իբր. 3. ջրվէժ. 4. նուռը.

տելիս իրան վնաս կտայ։ Թէ մէհիկս սիրելիք դուք էլ էն արջից ընակ [5]) ընելով՝ պէտկայ կաք մեր ղաքին խըստը վանում էք ձեր մեղքերը ասիք, որ քհանէն էլ ձեզ թա ղուԹին տայ, շըռոԹանի պես լուանայ ձեր մէջ ղօլը իս չէ՝ մեխքը որ ձեր մէջը մնայ՝ մըհացու կը դառնայ և ձեր հոգին կ'սպանի էն դինումը, [6]) դէ՝, օրհնեալ էք օրհնեալ լէք»։

Առաջ է գալի երկրորդը և բարձր ձայնով ասում.

—Աստուածային օրհնուԹիւնը և նախախնամային գըԹուԹիւնը սփռեալ ծաւալեսցէ՝ ի վերայ համախմբեալ ժողովրդոցդ վերայ եղիցի ամէն։ Սիրելի ժողովուրդ, գիտում էք ինչ կայ, լագղին որ լագղին ա՝ կալիս ա մեր եխտոտ ամանները վաքում [7]) ու տանում կլէկ, նշադիր քցում — Թըմըզացնում, սրփում սիպտակացնում։ Դէ՝ մէհի ես ձեզ սրա հայերենը ասեմ։ (Երեսին խաչ հանելով)—լագղին է տէրն մեր Յիսուս Քրիստոսը, կլէկը—ողորմեսցին և նշադիրն է հաղորդը։ Մէհի, սիրելիք, մենք օր կանք, Քրիստոսի փոխանակն ենք, դուք պէտկայ գաք մեր ղաքին չոքէք խըստըվանուէք, որ մենք էլ ձեր մեղքին ԹողուԹին տանք, լագղու նման Թըմըզցնենք, սրփենք, կլէկենք ձեզ, ոնց որ էն սիպտակ ամանը, դէ՝ օրհնեալ էք և օրհնեալ լինիք»։

ՀերԹը երրորդին հասնելով՝ կանգնում է մէջ տեղ և ձայնում.—

—Հօ՜, հօ՜, ա, խալխը, ղորդ ա ես կարդալ չեմ կիտում, ամա տենց չի։ (Ձեռքերկնցնելով դէպի աջ ու ձախ սիւների տակ կանգնած քահանաները). ո՛չ սրա ասածն է ոչ նրա, մեղքը որ կայ՝ անծողի պէս պան ա, անծողը Թա հողի տակ կցաւ [8]) հու, էն ա միշտ կըկենայ, ամա Թա հու տափի երեսն ընկաւ, եկող քինացողը կոխ կտայ ու կփչացնի։ Մէհի Թա դուք էլ եկաք ձեր մեղքը քհանին սեցիք, նա էլ ԹողուԹին կտայ, Թա հու չէ, ձեր սրտումը կմնա տափի տակի անծողի պէս և ձեզ էն դիննումը դըժողքը կտանի։ Դէ՜, հու բալա [9]) տղէն ոնց կարդալ լաւ քըրո ղում ա։ Սրանից ետ տէր ընդ ձեզ. քինացէք»։

---

5. օրինակ. 6. հանդերձեալ կեանքում. 7. հաւաքում. 8. մնաց. 9. փոքրիկ.